

եւ ոչ մէկը չապրեցաւ: Ապա Հարաշին ազատեց գերի մուսլիմներին եւ բերեց նոցա իւր հետ Բաշարփան:

Երբ խաղարաց թագաւորի որդին լուր առաւ, թէ ինչ արեց Հարաշին խաղարաց զօրքի հետ, նա սաստիկ յանդիմանեց եւ պախարակեց նոցա, ա-նուանեց նոցա թոյլ եւ տկար եւ հետզհետե վառեց նոցա մէջ կռուի ցանկութիւն, այնպէս որ խաղարք նորան խորհուրդ տուին՝ ժողովել իւր մարդիկը եւ գնալ պատերազմիլ Հարաշիի հետ: Նա զօրք գումարեց Արապատական գաւառից, եւ նորա հետ միացաւ մեծ բազմութիւն: Հարաշին նորա դէմ ելաւ, եւ երկու բանակներ՝ պատահելով միմեանց Բարդանդ¹ գաւառում, բախեցան սաստկապէս. խաղարք՝ լինելով թուով առաւել՝ գերեցին մուսլիմներին: Հարաշին քաջալերեց իւր մարդիկը, հրամայելով նոցա համբերել, եւ նոքա կրկին կռիւն տեսցան եւ արիարար ճակատեցան թշնամու հետ. երբ խաղարներից գերուած մուսլիմները օգնութեան կոչեցին, նոքա ցնծութեան աղաղակ եւ ուազմական կոչ արձակեցին, որով մէկը միւսին պատերազմելու քաջալերեցին. չկար մէկը, որ չլար, գթալով գերիներին: Թշնամին մեծ կորուստով ի վերջոյ ի փախուստ դարձաւ եւ՝ հալածուելով մուսլիմներից՝ հասաւ Արաս² գետը. այստեղ մուսլիմները յետ դարձան եւ ժողովեցին թշնամու բանակի ինչքը եւ աւարը, արձակելով գերիներին եւ

¹ Արապատականի գաւառներից մէկը, որի համանուն քաղաքը՝ ըստ Istaxri-ի տեղեկութեան՝ Արտասիլից 10 փարսաւ հեռի կը գտնուէր:

² Իմաս՝ Արաքս: Հեղինակիս յիշած Արաս ^ս արս ^ս ձեւը (որ միանգամայն համապատասխան է մեր ժողովրդական Արազ-ին) տարբերում է միւս արաբացի մատենագրերի սովորական ար-աս (կարգա՛ տր-աս) այլայլած ձեւից: